ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան «10» օգոստոսի 2020թ.

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 11.06.2018թ. N 702-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա մի կողմից (այսուհետ՝ Պատվիրատու) և Գաբրիելյան Ռաֆայելը (ք.Երևան, Հր.Ներսիսյան փող., շ.1, բն.10, անձնագիր՝AM0319679) Կոմիտեի քննչական վարչության թիվ 2 բաժնի ավագ քննիչ Լ.Լազարյանի (այսուհետ՝ քննիչ) 06.07.2020թ.-ի փորձագետ նշանակելու մասին որոշմամբ ճանաչված որպես փորձագետ. (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:
1.2. Կատարողը պարտավորվում է Կոմիտեի քննչական վարչության վարույթում քննվող թիվ 58150819 քրեական գործի շրջանակներում մատուցել հետևյալ ծառայությունները,

Կատարել նշյալ քրեական գործով 2020 թվականի հունիսի 18-ի որոշմամբ նշանակված երկրաբանա-տեխնոլոգիական համալիր հանձնաժողովային փորձաքննությունը, այդ թվում որոշմամբ առաջադրված հարցերի շուրջ կատարել ուսումնասիրություններ, ստուգումներ, վերլուծություններ ու կատարված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում ներկայացնել Պատվիրատուին գրավոր եզրակացություն:

1.3 Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 185 օրացույցային օր:

1.3.1. Ծառայության /աշխատանքների/ կատարման վայր է համարվում Պատվիրատուի կողմից հատկացված տարածքը:

1.3.2. Ծառայությունները /աշխատանքները ամբողջովին մատուցված են համարվում քննիչի կողմից գրավոր եզրակացությունը ստանալու և ընդունելու պահից:

1.3.3. Կատարողը Ծառայությունների մատուցման հետ առնչվող փաստաթղթերը Պատվիրատուի տարածքից կարող է դուրս հանել միայն Պատվիրատուի գրավոր թույլտվության առկայության դեպքում:

1.3.4. Չհրապարակել կամ որևէ մեկին չտրամադրել Ծառայությունների մատուցման պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական կամ առևտրային գաղտնիք պարունակող և ծառայողական կամ առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությունը:

1.3.5. Սույն պայմանագրի շրջանակներում քննիչի և կատարողի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

2. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

2.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է քննիչի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:
Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը քննիչին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:
2.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և քննիչը՝
ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.
բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
2.3 Քննիչը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:
2.4 Եթե 5 աշխատանքային օրվա ընթացքում քննիչը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և վերոնշյալ վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը քննիչը Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը գործում է պայմանագրի ժամկետի ամբողջ ընթացքում /մինչև 6 ամիս/ և կազմում է առավելագույնը 6 233 767 /վեց միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար յոթ հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ՝ ներառյալ 1 433 766.41 /մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար յոթ հարյուր վաթսունվեց ամբողջ քառասունմեկ/ ՀՀ դրամ եկամտային հարկի գումար:
3.1.1. Պատվիրատուն կարող է վճարումը իրականացնել ամսական համամասնություններով մինչև 1 038 961 /մեկ միլիոն երեսունութ հազար ինը հարյուր վաթսունմեկ/ դրամի չափով միջանկյալ (մասնակի) կատարված Ծառայությունների դիմաց՝ համապատասխան միջանկյալ (մասնակի) արձանագրությունների հիման վրա:
3.2.Հանձնման-ընդունման վերջնական, ինչպես նաև միջանկյալ (մասնակի) արձանագրությունները ստորագրվում են Ծառայությունները մատուցած Կատարողի և Պատվիրատուի անունից հանդես եկող քննիչի կողմից: Արձանագրությունում պետք է արծածված լինի կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը
3.3. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է փաստացի մատուցված ծառայության դիմաց ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է

տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:
4.2 Սույն պայմանագրի 1.2-րդ կետով նախատեսված ծառայություններին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:
4.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
4.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:
4.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
4.6. Պատասխանատվության ենթարկելը կողմին չի ազատում իր պարտավորությունները կատարելու է խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի միջև փաստացի ծագած հարաբերություններից՝ սույն թվականի օգոստոսի 1-ից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը ՝ ոչ ավել քան Պայմանագրի 1.3-րդ կետով նախատեսված ժամկետը:

7.2 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:

7.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.4. Սույն պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված պահանջները Կատարողի կողմից խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իր կրած վնասները ամբողջ ծավալով:

7.5.Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.6 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Գաբրիելյան Ռաֆայել
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	Հր.Ներսիսյան փող., շ.1, բն.10
ՀՎՀՀ 02647057	անձնագիր՝ AM0319679
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	հեռախոս՝ 094477969
Հ/Հ 900011054013	«Յունիբանկ» ՓԲԸ
Գլխավոր քարտուղար	Հ/Հ ՝ 24100177068400
Է. Գևորգյան _____	Ռ.Գաբրիելյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 1
«10» օգոստոս 2020թ. կնքված
պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

անվանումը	Ծառայության												
	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՊԵԿ 2020թ. բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝, այդ թվում*												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Ծառայությունների մատուցում								3 166 884	3 166 884	6 233 767	6 233 767	6 233 767	6 233 767

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
Գաբրիելյան Ռաֆայել
Հր.Ներսիսյան փող., շ.1, բն.10
անձնագիր՝ AM0319679
հեռախոս՝ 094477969
«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ ՝ 24100177068400

Ռ.Գաբրիելյան _____
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված 2
«10» օգոստոս 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Կատարող	Քննիչ
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Քննիչը և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.